4 նոյեմբերի 2010 թվականի N 1411 - Ն

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ, ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՏԱՐԱԾՔ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 728-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը և ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10.1-ին և 19-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող (պետական գրանցման վկայական՝ N 2647793, տրված՝ 02.09.2010 թ.), որևէ պետական կառավարչական հիմնարկի հաշվեկշռում չհաշվառված, Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասի N 4/8 հասցեում գտնվող՝ 8.793318 հեկտար հողատարածքը (այսուհետ՝ գույք) նվիրել Գյումրու քաղաքային համայնքին՝ նվիրատվության պայմանագրում սահմանելով, որ սույն կետից բխող գույքի հանձնման-ընդունման աշխատանքները և գույքային իրավունքների պետական գրանցումը կատարվելու են Գյումրու քաղաքային համայնքի միջոցների հաշվին:

2. Գյումրի քաղաքի «Մուշ-2» բնակելի թաղամասի տարածքն առանձնացնել՝ որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի «Գյումրու, Վանաձորի, Դիլիջանի, Ջերմուկի, Վաղարշապատի, Աշտարակի, Գորիսի, Վայքի քաղաքային և Տաթևի ու Հալիձորի գյուղական համայնքներում (բնակավայրերում) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներն առանձնացնելու մասին» N 728-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝համաձայն հավելվածի.

2) որոշման N 10 հավելվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

1.	քաղ. Գյումրի	Ներառում է՝ 1.2.3- «Կումայրի» արգելոցի պահպանման գոտիները 4.5.6- համաքաղաքային կանաչ գոտիները 7- տեխնոպարկի գոտին 8- ազատ տնտեսական գոտին 9- շրջանցող ավտոմայրուղու գոտին 10-«Մուշ-2» բնակելի թաղամասը	7888.0 որից՝ 3894.0 2976.0 50.0 548.0 420.0 49.3	բնակավայրի կայուն զարգացում, պատմամշակութային և քաղաքաշինական միջավայրի վերականգնում, պահպանում և զարգացում	գոտևորման ու կառուցապատման նախագծեր և քաղաքաշինական հայեցակարգեր, քաղաքաշինական կանոնադրություն, ներդրումային ծրագրեր

»:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի հետ համատեղ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման-ընդունման և գույքային իրավունքների պետական գրանցման աշխատանքների կատարումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. նոյեմբերի
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 4-ի N 1411 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2009 թվականի
հունիսի 26 - ի N 728 - Ն որոշման



»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

10_1411